

**Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 89/618/Եվրատոմ հրահանգ
Ճառագայթային վթարների դեպքում բնակչությանը առողջության պաշտպանությանն
ուղղված կիրառվելիք միջոցների և ձեռնարկվելիք քայլերի մասին տեղեկացնելու մասին
(Պաշտոնական տեղեկագիր L 357 , 07/12/1989 P. 0031 – 0034)**

Ֆիննական հատուկ հրատարակություն՝ Գլուխ 15 Հատոր 9 P. 0013

Շվեդական հատուկ հրատարակություն՝ Գլուխ 15, Հատոր 9 P. 0013

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի հիմնադրման մասին»
պայմանագիրը և, մասնավորապես, դրա 31-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը, որը ներկայացվել է, ինչպես
սահմանված է նշված հոդվածով անդամ պետություններում գիտական փորձագետներից
Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի կողմից նշանակված անձանց խմբի հետ
խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական կոմիտեի եզրակացությունը (2),

քանի որ Պայմանագրի 2(բ) հոդվածով սահմանվում է, որ Համայնքը պետք է սահմանի
աշխատողների և բնակչության առողջության պաշտպանության համար անվտանգության
միասնական ստանդարտներ,

քանի որ 1959 թվականի փետրվարի 2-ին Խորհուրդն ընդունել է թիվ 80/836/Եվրատոմ և
(2) 84/467/Եվրատոմ (5) հրահանգներով վերջին անգամ փոփոխված՝ իոնացնող
ճառագայթումներից առաջացող վտանգներից աշխատողների և բնակչության առողջության
պաշտպանության համար հիմնական ստանդարտներ սահմանելու մասին հրահանգներ,

քանի որ 80/836/Եվրատոմ հրահանգի 24-րդ հոդվածի համաձայն բոլոր անդամ
պետությունները պետք է ապահովեն, որ ճառագայթահարված աշխատողները
ճառագայթումից պաշտպանվելու մասին համարժեք տեղեկություններ ստանան,

քանի որ նշված Հրահանգի 45 (4) հոդվածի համաձայն յուրաքանչյուր անդամ պետություն պատահարի դեպքում պետք է նախատեսի միջամտության մակարդակներ և իրավասու մարմինների կողմից ձեռնարկվելիք միջոցներ և անձնակազմի ու սարքավորումների մասով անհրաժեշտ ռեսուրսները, որպեսզի հնարավոր լինի միջոցներ ձեռնարկել բնակչությունը պաշտպանելու և վերջինիս առողջությունը պահպանելու նպատակով,

քանի որ Համայնքի մակարդակով բնակչությանը մատչելի դարձած տեղեկություններին պետք է ավելացվեն Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի 85/337/ԵՏՀ հրահանգի 6 (2) հոդվածով արդեն նախատեսված գոտիները շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր նախագծերի ներգործությունների գնահատման մասին և Խորհրդի 1982 թվականի հունիսի 24-ի 82/501/ԵՏՀ հրահանգի 8 (1) հոդվածով նախատեսվող՝ որոշակի արդյունաբերական աշխատանքների հիմնական վթարային վտանգների մասին՝ փոփոխված 88/610/ԵՏՀ հրահանգով (3),

քանի որ բոլոր անդամ պետություններն ստորագրել են Միջուկային վթարի վաղ ծանուցման մասին Ատոմային էներգիայի միջազգային գործակալության կոնվենցիան,

քանի որ ճառագայթային վթարների դեպքում տեղեկությունների վաղ փոխանակման համար Համայնքի միջոցառումների մասին Խորհրդի 1987 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87/600/Եվրատոմ որոշմամբ (4) պահանջվում է, որ բոլոր անդամ պետությունները, որոնք որոշում են արտակարգ միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու համար բնակչությունը կամ շրջակա միջավայրում ռադիոակտիվության չափազանց բարձր մակարդակների արդյունքում, կամ վթարից հետո, որից առաջանում է կամ կարող է առաջանալ ռադիոակտիվ նյութի զգալի արտահոսք/արտանետում՝ ծանուցելու համար Հանձնաժողովին և անդամ պետություններին, որոնք կրում են կամ կարող են կրել այն պաշտպանիչ միջոցների ազդեցությունը, որոնք նրանք ձեռնարկվել կամ պլանավորվել են բնակչությանը տեղեկացնելու համար,

քանի որ որոշ անդամ պետություններ միջուկային վթարի դեպքում տեղեկությունների, համակարգման և փոխազակցության մասին արդեն երկկողմ պայմանագրեր են կնքել,

քանի որ անդամ պետությունում միջուկային տեղակայանքում միջադեպի դեպքում անհրաժեշտ է խրախուսել, որ ազդակիր բնակչությունը անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի, որոնք կարող են բարձրացնել ձեռնարկվող կամ նախատեսվող արտակարգ միջոցառումների արդյունավետությունը,

քանի որ բնակչության այն հատվածներին, որոնց վրա կարող է ներգործել ճառագայթային վթարը, պետք է ուստի նախօրոք համապատասխան և շարունակական տեղեկություններ տրամադրել առողջության պաշտպանությանն ուղղված պլանավորվող միջոցների մասին կապված իրենց և այն գործողության հետ, որ նրանք պետք է ձեռնարկեն ճառագայթային վթարի դեպքում, քանի որ այդ իսկ նպատակով բնակչության այդ հատվածներին տեղեկացնելու համար որոշակի համատեղ սկզբունքներ և կոնկրետ դրույթներ պետք է սահմանվեն Համայնքի մակարդակով,

քանի որ պետք է նույնպես մշակվեն իրական ճառագայթային վթարի ազդեցությունը փաստացի կրած բնակչությանը տեղեկացնելու համար համատեղ սկզբունքներ և որոշակի դրույթներ,

քանի որ տրամադրվող տեղեկություններում հաշվի նույնպես պետք է առնվեն սահմանային/սահմանամերձ տարածքներում բնակվող բնակչության հատվածները,

քանի որ, ավելին, ջանքեր պետք է գործադրվեն տեղեկացնելու բնակչությանը՝ հզորացնելու ճառագայթային վթարի դեպքում ազգային մակարդակով արդեն իսկ գործող միջոցները և գործելակերպերը:

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ 1

Նպատակները և սահմանումները

Հոդված 1

Սույն Հրահանգով նախատեսվում է սահմանել Համայնքի մակարդակով ճառագայթային վթարի դեպքում նախատեսվող աշխատանքների ժամանակ առողջության պաշտպանության բարելավման նպատակով բնակչությանը տեղեկացնելու համար միջոցների և ընթացակարգերի մասով ընդհանուր նպատակները:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակներով «ճառագայթային վթար» նշանակում է ցանկացած իրավիճակ՝

1. որը հաջորդում է՝

ա) երկրորդ կետում նշված միջոցներ կամ աշխատանքներ ներառող անդամ պետության տարածքում պատահար, որի արդյունքում առաջանում կամ կարող է առաջանալ ռադիոակտիվ նյութի զգալի արտանետում, կամ

բ) իր սեփական տարածքում կամ դրանից դուրս ռադիոակտիվության չափազանց մեծ մակարդակների հայտնաբերումը, որոնք կարող են վնասակար լինել այդ անդամ պետությունում հանրային առողջության համար, կամ

գ) երկրորդ կետում նշված միջոցներ կամ աշխատանքներ ներառող (ա) կետում սահմանված պատահարներից բացի այլ պատահարներ, որի արդյունքում առաջանում կամ կարող է առաջանալ ռադիոակտիվ նյութի զգալի արտանետում, կամ

դ) այլ պատահարներ, որոնցից առաջանում կամ կարող է առաջանալ ռադիոակտիվ նյութի զգալի արտանետում.

2. ինչը կարող է առաջանալ 1 (ա) և (գ) կետում նշված միջոցների կամ աշխատանքների դեպքում, հետևյալի դեպքում՝

ա) ցանկացած միջուկային ռեակտոր՝ անկախ տեղակայման վայրից,

բ) ցանկացած այլ միջուկային վառելիքային ցիկլով աշխատող սարք,

գ) ռադիոակտիվ թափոնների կառավարման ցանկացած հարմարանք,

դ) միջուկային վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների փոխադրում և պահում,

ե) գյուղատնտեսական, արդյունաբերական, բժշկական և այլ հարակից գիտահետազոտական նպատակներով ռադիոիզոտոպների ստացում, կիրառում, պահում, հեռացում և փոխադրում,

զ) տիեզերական ապարատներում էներգիայի ստացման համար ռադիոիզոտոպների կիրառումը:

Սույն Հրահանգի կիրառման նպատակներով «ռադիոակտիվ նյութի զգալի արտանետում/արտահոսք» և «ռադիոակտիվության չափազանց բարձր մակարդակներ, որոնք կարող են վնասակար լինել հանրային առողջությանը» եզրույթները նշանակում են այնպիսի իրավիճակներ, որոնք կարող են հանգեցնել բնակչության անդամների այնպիսի դոզաներով ճառագայթահարման, որը գերազանցում է ճառագայթային պաշտպանության համար Համայնքի անվտանգության հիմնական ստանդարտներ սահմանող Հրահանգների համաձայն սահմանված դոզային սահմանաչափերը:

Հոդված 4

Սույն Հրահանգի նպատակով ստորև բերված հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստներով՝

ա) բնակչություն, որը կարող է կրել ազդեցություն ճառագայթային վթարի դեպքում՝

բնակչության ցանկացած խումբ, որի համար անդամ պետությունները կազմել են ճառագայթային վթարի դեպքում միջամտության ծրագրեր.

բ) բնակչություն, որը կարող է կրել ազդեցություն ճառագայթային վթարի դեպքում՝

բնակչության ցանկացած խումբ, որի համար որոշակի պաշտպանական միջոցներ են ձեռնարկվում ճառագայթային վթարի առաջացման իսկ պահից:

ԲԱԺԻՆ II

Նախնական տեղեկություններ

Հոդված 5

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բնակչությանը, որը կարող է ազդեցություն կրել ճառագայթային վթարից, տրվեն տեղեկություններ դրա նկատմամբ կիրառվող առողջության պաշտպանությանն ուղղված միջոցների մասին և գործողության մասին, որ այն պետք է ձեռնարկի նման վթարի դեպքում:

2. Տրամադրվող տեղեկություններն առնվազն ներառում են I Հավելվածով սահմանված տարրերը:

3. Այս տեղեկությունները տրամադրվում են առանց որևէ պահանջի 1-ին պարբերությունում նշված բնակչությանը:

4. Անդամ պետություններն արդիականացնում են տեղեկությունները և դրանք շրջանառում որոշակի ժամանակահատվածներում և ամեն անգամ, երբ միջոցառումներում նկարագրված զգալի փոփոխություններ են տեղի ունենում: Այդ տեղեկությունները ևս պետք է մատչելի դարձվեն հանրությանը:

ԲԱԺԻՆ III

Ճառագայթային վթարի դեպքում տեղեկությունները

Հոդված 6

1. Անդամ պետություններն ապահովում են որ, ճառագայթային վթարի առաջացման դեպքում, փաստացի ազդեցություն կրած բնակչությանն անհապաղ տեղեկացվի վթարի փաստերի մասին, ձեռնարկվելիս քայլերի և անհրաժեշտության դեպքում համապատասխան դեպքի մասին, դրա նկատմամբ կիրառվող առողջության պաշտպանությանն ուղղված միջոցների մասին:

2. Տրամադրվող տեղեկությունները ներառում են II Հավելվածում առկա կետերը, որոնք համապատասխանում են կետերին:

ԲԱԺԻՆ IV

Անձանց տեղեկությունները, ովքեր կարող են ներգրավվել ճառագայթային վթարի դեպքում պատահարի ժամանակ օժանդակության կազմակերպման գործում

Հոդված 7

1. Անդամ պետություններն ապահովում են, որ անձանց, ովքեր կառույցների անձնակազմում են և (կամ) ներգրավված չեն 2 (2) հոդվածով սահմանված աշխատանքներում, սակայն ովքեր կարող են ընդգրկվել ճառագայթային վթարի դեպքում օժանդակության կազմակերպման մեջ տրվեն համարժեք և պարբերաբար արդիականացվող

տեղեկություններ առողջության մասին, որ դրանց միջամտությունը կարող է ներառել և նման դեպքում ձեռնարկվելիք նախազգուշական միջոցների մասին. այս տեղեկություններում հաշվի են առնվում հնարավոր ճառագայթային բոլոր վթարները:

2. Ճառագայթային վթարի առաջացման, իսկ պահից այս տեղեկությունները համապատասխան կերպով լրացվում են՝ ելնելով որոշակի հանգամանքներից:

ԲԱԺԻՆ V

Կիրարկման ընթացակարգերը

Հոդված 8

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ հոդվածներում նշված տեղեկություններում նույնպես նշվում են այդ հոդվածներում նշված միջոցներ կիրարկելու համար պատասխանատու մարմինները:

Հոդված 9

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ հոդվածներում նշված տեղեկությունների շրջանառության համար ընթացակարգերը և այն ընթացակարգերը, որոնց հասցեագրվում են տեղեկությունները (ֆիզիկական և իրավաբանական անձինք սահմանվում են յուրաքանչյուր անդամ պետությունում):

Հոդված 10

1. Հինգերորդ հոդվածում նշված տեղեկությունները պետք է հարկ եղած դեպքում ծանուցվեն Հանձնաժողովին՝ չհակասելով այլ պետություններին այդ տեղեկություններին ծանուցելու անդամ պետությունների իրավունքին:

2. Անդամ պետության կողմից շրջանառվող տեղեկությունները վեցերորդ հոդվածի համաձայն ծանուցվում են Հանձնաժողովին և այն անդամ պետություններին, որոնք կրում են կամ կարող են ազդեցություն կրել:

3. Յոթերորդ հոդվածում նշված տեղեկությունների մասով ճառագայթային վթարի մասին տվյալները պետք է ծանուցվեն Հանձնաժողովին վերջինիս դիմումի համաձայն հնարավորինս արագ և իրագործելի լինելու դեպքում:

ԲԱԺԻՆ VI

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 11

Սույն Հրահանգը չպետք է ներգործի անդամ պետությունների՝ սույն Հրահանգի համաձայն պահանջվող հավելյալ տեղեկություններ տրամադրելու համար միջոցներ կիրառելու կամ ընդունելու իրավունքի վրա:

Հոդված 12

Անդամ պետություններն ընդունում են սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ ակտերը ոչ ուշ, քան ընդունումից հետո 24 ամիս անց: Նրանք սույնով տեղեկացնում են այդ մասին Հանձնաժողովին ինչպես նաև դրանում կատարվող ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 13

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1989 թվականի նոյեմբերի 27-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Ռ. ԴՈՒՄԱՍ

1) ՊՏ Թիվ C 158, 26. 06. 1989թ., էջ 403:

- 2) ՊՏ Թիվ C 337, 31. 12. 1988թ., էջ 67:
- 3) ՊՏ Թիվ 11, 20. 02.1959թ., էջ 221/59:
- 4) ՊՏ Թիվ L 246, 17. 09. 1980թ., էջ 1:
- 5) ՊՏ թիվ L 265, 05. 10. 1984թ., էջ 4;
- 6) ՊՏ թիվ L 175, 07. 05. 1994թ., էջ 40:
- 7) ՊՏ թիվ L 230, 05. 08. 1982թ., էջ 1:
- 8) ՊՏ Թիվ L 336, 07. 12. 1988թ., էջ 14:
- 9) ՊՏ թիվ L 371, 30. 12. 1987թ., էջ 76:
- 1) Տես մասնավորապես թիվ 80/836/Եվրատոմ 12-րդ հոդվածը:

Հինգերորդ հոդվածում նշված նախնական տեղեկությունները

1. Ռադիոակտիվության և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության մասին հիմնական փաստեր:
2. Ներառված ճառագայթային վթարի տարբեր տեսակները և բնակչության ու շրջակա միջավայրի համար դրանց հետևանքները:
3. Վթարային միջոցներ, որոնք նախատեսված են ճառագայթային վթարի դեպքում զգուշացնելու, պաշտպանելու և օժանդակելու բնակչությանը:
4. Ճառագայթային վթարի դեպքում բնակչության կողմից ձեռնարկվելիք գործողության մասին համապատասխան տեղեկություններ:

Վեցերորդ հոդվածում նշված ճառագայթային վթարի դեպքում տեղեկությունները

1. Անդամ պետություններում նախկինում մշակված միջամտության նախագծերի հիման վրա իրականում ազդեցություն կրած բնակչությունը ճառագայթային վթարի դեպքում արագ և պարբերաբար ստանում է՝

ա) այն վթարի տեսակի մասին տեղեկություններ, որը տեղի է ունեցել և հնարավորության դեպքում՝ դրա բնութագրերը/առանձնահատկությունները (օրինակ՝ դրա աղբյուրը/ծագումը, մասշտաբը և հնարավոր զարգացումը)։

բ) պաշտպանության շուրջ խորհրդատվություն, որը կախված վթարի տեսակից կարող է՝

- ներառել հետևյալը՝ աղտոտման ենթակա որոշակի սննդամթերքի սպառման մասով սահմանափակումներ, հիգիենայի և հակաաղտոտման/մաքրման մասին պարզ կանոններ, ներսում մնալու մասով առաջարկություններ, պաշտպանիչ նյութերի բաշխում և օգտագործում, էվակուացիոն միջոցառումներ։

- ուղեկցվի, անհրաժեշտության դեպքում, բնակչության որոշակի խմբերի համար հատուկ նախագգուշացումներով։

գ) իրավասու մարմինների կողմից ցուցումներով կամ պահանջներով համագործակցություն առաջարկող հայտարարություններ։

2. Եթե վթարին նախորդում է նախասահազանգման փուլ, ապա ճառագայթային վթարի դեպքում ազդեցության ենթակա բնակչությունը պետք է այդ փուլում արդեն ստանա տեղեկություններ և խորհրդատվություն, ինչպես օրինակ՝

- կոչ շահագրգիռ բնակչությանը միացնել ռադիո կամ հեռուստացույց։

- որոշակի կոլեկտիվ պատասխանատվություններով ձեռնարկություններին նախապատրաստական խորհրդատվություն։

- առանձնակի ազդեցություն կրած աշխատանքային խմբերին առաջարկություններ։

3. Այս տեղեկությունները և խորհրդատվությունը ժամանակ լինելու դեպքում կհամալրվեն ռադիոակտիվության և մարդու ու շրջակա միջավայրի վրա դրա ազդեցությունների մասին հիմնական փաստերի մասին հիշեցումով։